ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ԷԿՈՆՈՄԻԿԱՅԻ ՆԱԽԱՐԱՐ

ՀՐԱՄԱՆ

«14» 11 2025թ. N 3480 Ա

ք. Երևան

«ՍՆՆԴԱՄԹԵՐՔԻ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ՈԼՈՐՏԻ ՌԻՍԿԵՐԻ ԳՆԱՀԱՏՄԱՆ ԵՎ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅԱՆ ԳԻՏԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ» ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆԸ ՌԻՍԿԻ ԳՆԱՀԱՏՈՒՄ ԻՐԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ ԼԻԱԶՈՐՄԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2025 թվականի մայիսի 8 N 563-Ն որոշմամբ (այսուհետ՝ որոշում) հաստատված հավելվածի 14-րդ կետով, Հայաստանի Հանրապետության վարչապետի 2019 թվականի հունիսի 1-ի N 658-Լ որոշմամբ հաստատված հավելվածի 18-րդ կետի 21-րդ ենթակետով, Հայաստանի Հանրապետության էկոնոմիկայի նախարարի 2025 թվականի հունիսի 10-ի N 1599-Լ հրամանով հաստատված N 2 հավելվածի 17-րդ կետով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության էկոնոմիկայի նախարարի հոկտեմբերի 28-ի N 3258-Ա հրամանով ստեղծված հանձնաժողովի 2025 թվականի նոյեմբերի 11-ի համապատասխանության վերաբերյալ եզրակացությունը, որի համաձայն «Սննդամթերքի անվտանգության ոլորտի

ռիսկերի գնահատման և վերլուծության գիտական կենտրոն» փակ բաժնետիրական ընկերության կողմից ներկայացված հայտը և կից փաստաթղթերը, համապատասխանում են որոշման հավելվածի 8-րդ կետով սահմանված բոլոր չափանիշներին՝

հրամայում եմ՝

1. «Սննդամթերքի անվտանգության ոլորտի ռիսկերի գնահատման և վերլուծության գիտական կենտրոն» փակ բաժնետիրական ընկերությանը հինգ տարի ժամկետով լիազորել իրականացնելու ռիսկի գնահատում անասնաբուժության ոլորտում՝ վիրուսային և մանրէային ծագման հիվանդությունների ցուցանիշներով:

2. Սույն հրամանը կարող է բողոքարկվել վարչական կարգով՝ այն ուժի մեջ մտնելու օրվանից երկամսյա ժամկետում կամ Հայաստանի Հանրապետության վարչական դատարան՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված ժամկետում:

ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՏԱՐՈՂ

ԱՐՄԱՆ ԽՈՋՈՅԱՆ